ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
08 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 1

## ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 8-ի թիվ 1արտահերթ նիստի օրակարգը.
1. Համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 22-ի 63-Ն որոշման մեջ և որոշման հավելվածում փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

Կողմ -4    Դեմ -0    Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՈՒԱՄ
3. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 2-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի 63-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ի կետի, 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝
*համայնքի ավագանին որոշում է.*

1. Նոր Երզնկա համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 22-ի «Նոր Երզնկա համայնքի տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» N63-Ն որոշման մեջ և որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.
1) N63-Ն որոշման վերնագրում և որոշման 1-ին կետում «հաստատել» բառը փոխարինել «սահմանել» բառով:
2) N63-Ն որոշման հավելվածի վերնագրում «2015» թիվը փոխարինել «2016» թվով:
3) Հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում «ա» ենթակետով» բառերը փոխարինել «1-ին ենթակետի «ա» պարբերությամբ» բառերով:
4) Հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերության մեջ «սույն կետի ա. ենթակետով» բառերը փոխարինել «սույն ենթակետի «ա» պարբերությամբ» բառերով:
5) Որոշման հավելվածի 19-րդ կետից հետո լրացնել «19.1 պարբերությամբ «Նոր Երզնկա համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 250.000 դրամ» նախադասությունը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

2. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ

3. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

4. ՄԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ